# CITIES OF PEACE

YEREVAN2015

Dedicated to the transformative power of art to build a culture of understanding
Նվիրում է արվեստի՝ փոխըմբռնման մշակույթ ձևավորող վերափոխիչ ուժին

Commemorating 100-th Anniversary of the Armenian Genocide
Հայոց Ցեղասպանության 100-րդ տարում՝ ի կարևորում հիշողության

National Gallery of Armenia 18.12.2015
Հայաստանի ազգային պատկերասրահ 18.12.2015

# Cities of Peace® Baghdad Beijing Hiroshima Jerusalem Kabul Lhasa Monrovia New York Sarajevo Yerevan



Jerusalem



New York



Monrovia



Sarajevo



Hiroshima

“It isn’t enough to talk about peace. One must believe in it. And it isn’t enough to believe in it. One must work at it.”

Eleanor Roosevelt

“Բավարար չէ միայն խոսել խաղաղության մասին: Հարկավոր է հավատալ խաղաղությանը: Եվ բավարար չէ միայն հավատալ. անհրաժեշտ է աշխատել խաղաղության համար”:

Էլեանոր Ռուզվելտ

# Preface

I got acquainted with the project Cities of Peace by chance: Ruben Elamiryan, one of my apprentices, met Dr. Ellen Frank during an international forum, and presented the project to me.

I was impressed by the philosophy of the concept, its depth and high esthetic value.

An idea to create a painting dedicated to Yerevan appeared almost instantly: this was a year commemorating the Centennial of the Armenian Genocide, to which I had a great inner call to contribute personally.

My wife has supported me and took over the organizing of the entire project.

The realization of the project Cities of Peace and the creation of the monumental painting Yerevan: To Know Wisdom was made possible by the support of the honorary Armenians, whom I greatly thank: Arsen Aghajanyan, Levon Arevshatyan, Ashot Baghdasaryan, Armen Darbinyan, Movses Dzavaryan, Artur Janibekyan, Mushegh Mamikonyan, Mikayel Minasyan, Gor Nahapetyan, Ruben Vardanyan.

My special thanks to Armine Antikyan for organizing the grand un veiling ceremony.

Yerevan: To Know Wisdom is a unique tribute to the Armenian history and culture, our hard-won but great heritage.

It will be exhibited worldwide together with the other paintings from the collection Cities of Peace, thus glorifying the beauty of the Armenian letters, scriptures and colours.

Good luck to this work, and may the fortune be with us!

Armen Darbinyan

# Ներածական



Էլլեն Ֆրանկի Խաղաղության քաղաքներ նախագծին ծանոթացա պատահաբար. իմ սաներից Ռուբեն Էլամիրյանը առնչվել էր նրա հետ միջազգային մի համաժողովում: Ինձ տպավորեցին թե՛ նախագծի փիլիսոփայությունը, թե՛ դրա իրականացման ընդգրկուն ընթացքը, և թե՛ գեղարվեստական բարձր որակը:

Երևանին նվիրված լայնածավալ կտավի մտահղացումը ծնվեց անմիջապես. ընթանում էր Հայոց Ցեղասպանության 100-րդ տարին, և դրան սեփական նախաձեռնությամբ մասնակցելու ներքին պարտավորություն էի զգում: Դալիան իմ կողքին էր և իր վրա վերցրեց կազմակերպումը:

Նախագծի իրականացումը իրենց մասնակցությամբ հնարավոր դարձրին ազնվագույն հայեր Արսեն Աղաջանյանը, Լևոն Արևշատյանը, Աշոտ Բաղդասարյանը, Մովսես Ձավարյանը, Արթուր Ջանիբեկյանը, Մուշեղ Մամիկոնյանը, Միքայել Մինասյանը, Գոռ Նահապետյանը, Ռուբեն Վարդանյանը, որոնց արտահայտում եմ իմ խորին շնորհակալությունը:

Երևան. Ճանաչել զիմաստություն կտավը յուրահատուկ ձոն է հայոց պատմությանը և մշակույթին, մեր դժվարին, բայցև փառապանց ժառանգությանը: Այն՝ հավաքածուի այլ կտավների հետ միասին ցուցադրվելու է աշխարհի տարբեր մասերում՝ սփռելով հայոց տառերի, գրերի և գույների գեղեցկությունը:

Բարի՛ երթ կտավին, և Բարին ընդ մեզ բոլորիս:

Արմեն Դարբինյան

# Introduction to Cities of Peace

Cities of Peace is a communications catalyst, architecting a new cultural diplomacy. With participation by international interns, scholars and experts from more than 20 countries, Cities of Peace includes gold-illuminated paintings honoring the history and culture of world cities that have suffered trauma and strife: Baghdad, Beijing, Hiroshima, Jerusalem, Kabul, Lhasa, Monrovia, New York, and Sarajevo. In September 2015, we are presenting Cities of Peace at the European Union Peace Research Association (EUPRA), Norway; meeting with German member of Parliament, Berlin (Cities of Peace Commemorative Series: Honoring Osviencim and the Liberation of Auschwitz); and the launch Cities of Peace: Honoring Yerevan, Armenia at the Russian-Armenian (Slavonic) University (RAU). Included in our are: Aleppo, Beirut, Belfast, Berlin, Bujumbura, Damascus, Dresden, Kinshasa, Mogadishu, Phnom Penh, Seoul, and St. Petersburg.

Cities of Peace strengthens through cooperation and activities:

- Collaborative reciprocal learning platforms
- Strategies promoting intercultural dialogue
- Interconnection to our shared humanity and heritage
- Advances mutual understanding and acknowledgment of world cities and cultures
- Interfaces with youth groups, universities, museums, cultural centers, governments, and parliaments

Photos: Dr. Ellen Frank with interns from Armenia, Slovenia, Switzerland.







# Նախագծի մասին

Խաղաղության Քաղաքներ նախագիծը հաղորդակցման խթանիչ ուժ է, որի նպատակն է առաջ քաշել նոր մշակութային դիվանագիտություն: Խաղաղության Քաղաքներ նախագծի՝ ավելի քան 20 երկրից կամավոր սկզբունքներով աշխատող նկարիչները և փորձագետները ստեղծում են ոսկով լուսազարդված նկարներ, որոնք կոչված են մեծարել ցեղասպանություն, ողբերգություն և պայքար վերապրած քաղաքներին և մշակույթներին՝ ի դեմս Բաղդադի, Պեկինի, Հիրոսիմայի, Երուսաղեմի, Քաբուլի, Լհասայի, Մոնրովիայի, Նյու Յորքի, Սարաևոյի և Երևանի: 2015թ. սեպտեմբերին մենք ներկայացրել ենք Խաղաղության Քաղաքները Եվրոպական միության Խաղաղության հետազոտման ասոցիացիային (European Union Peace Research Association) Նորվեգիայում, հանդիպել ենք մշակույթի և մեդիայի գերմանական կառավարական կոմիտեի (German Parliamentary Committee of Culture and Media) ներկայացուցիչներին (Խաղաղության Քաղաքների հուշային շարք՝ հարգանքի տուրք մատուցելով Օսվենցիմի ողբերգությանը և Աուշվիցի ազատագրմանը) և մեկնարկել ենք Խաղաղության քաղաքների հաջորդ նախագիծը, որը մեծարում է ԵՐԵՎԱՆԸ: Հետագայում նախատեսում ենք ընդգրկել նաև հետևյալ քաղաքները՝ Հալեպ, Բեյրութ, Բելֆաստ, Բեռլին, Բուջումբուրա, Դամասկոս, Դրեզդեն, Կինշասա, Մոգադիշո, Պնոմպեն, Սեուլ, Սանկտ Պետերբուրգ և այլ:

Խաղաղության Քաղաքներ նախագիծը համագործակցության և ծավալած գործունեության միջոցով նպաստում է.
- համագործակցային փոխադարձ ուսումնական հարթակների ստեղծմանը,
- միջմշակութային երկխոսությունը խթանող ռազմավարության տարածմանը,
- մարդկության ժառանգության միջկապակցվածությանը,
- փոխըմբռնմանը և աշխարհի քաղաքների, մշակույթների ճանաչմանը,
- երիտասարդական խմբերի, համալսարանների, թանգարանների, մշակութային կենտրոնների, կառավարությունների և խորհրդարանների միջև համագործակցությանը

Նկարներ՝ Էլլեն Ֆրանկը Հայաստանի կամավորների հետ:





# Yerevan: To Know Wisdom



Yerevan: To Know Wisdom celebrates Armenian ancient history, its multilayered culture, unique symbolism and, most of all, the Armenian alphabet with the first sentence ever written in it: To know wisdom and guidance; to perceive the words of insight (Solomon, Book of Proverbs 1:2)

Sacred themselves, letters were also numbers and musical notes; they contributed to the preservation of the nation throughout the centuries, helping to protect the Armenians from ethnocide. Envisioned as birds by the alphabet's creator, Mesrop Mashtots described the letters as "the wings for the nation to fly into the future."

Yerevan: To Know Wisdom repeats the alphabet 42 times, one line for each letter. The audience joins the Armenians in viewing language as puzzle, as meditation, as sacred, blinking with the discovery of each letter and finally forming Mashtots' sentence.

From the former capitals of Armenia clustered as spheres and decorated with Armenian symbols to the Tree of Life, including the 1865 map of Yerevan that inspired the architect Tamanian's design for the new city, the hidden sacred letter "E" meaning "Being" to the ornament with gilded texts in English from Sasna Tsrer, Komitas and Parajanov – Yerevan: To Know Wisdom tells its own story.

Dating back to Urartu, the god Khaldi hides among the symbolic apricot tree leaves, moving us toward modern time. The thriving diaspora highlighted in shades of gold announces to the world the presence of Armenians among us all.

# ԵՐԵՎԱՆ. ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ




Երևան. ճանաչել զիմաստություն կտավը մեծարում է հայոց հնադարյա պատմությունը, բազմաշերտ մշակույթը, յուրահատուկ սիմվոլիզմը և ամենակարևորը՝ հայկական այբուբենը՝ պատկերելով դրանով գրված առաջին նախադասությունը՝ ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ (Սողոմոն, Առակների գիրք 1:2):

Իրենց մեջ սրբազան իմաստ պարունակելով՝ տառերը նաև թվեր էին և երաժշտական նոտաներ. դրանք դարերի ընթացքում օգնել են պաշտպանել հայերին էթնոցիդից՝ մշակութային սպանդից: Տառերը թռչունների տեսքով պատկերելով՝ մեծն Մեսրոպ Մաշտոցը դրանք նկարագրել է որպես «թևեր, որպեսզի ազգը սուրա դեպի ապագա»:

Երևան. ճանաչել զիմաստություն կտավը կրկնում է այբուբենը 42 անգամ՝ յուրաքանչյուր տառին մի գիծ հատկացնելով: Հանդիսատեսը հայերի հետ միասին սկսում է դիտարկել լեզուն որպես գաղտնագիր, որպես ներանձնացում, որպես սրբություն՝ թարթելով յուրաքանչյուր տառի բացահայտման հետ և ի վերջո կազմելով Մաշտոցի նախադասությունը:

Օղակաձև պատկերված և հայկական սիմվոլներով զարդարված Հայաստանի նախկին մայրաքաղաքներից մինչև Կենաց ծառ, ներառյալ 1865 թվականի Երևանի քարտեզը, որով ոգեշնչվել է ճարտարապետ Թամանյանը՝ նոր քաղաքը նախագծելիս, թաքնված գաղտնի «Է» տառ, որը նշանակում է «Էություն», ոսկեզարդված նախշով անգլերենով տեքստեր Սասնա Ծռերից, Կոմիտասից և Փարաջանովից. Երևան. ճանաչել զիմաստություն կտավը պատմում է իր ուրույն պատմությունը:

Սիմվոլիկ ծիրանենու տերևներում թաքնված՝ Ուրարտուի դարաշրջանի Հալդի աստվածը տեղափոխում է մեզ դեպի մեր ժամանակները: Ոսկու ստվերներում պատկերված ծաղկունք ապրող սփյուռքը աշխարհին ազդարարում է հայերի գոյության և ներկայության մասին:

# Ellen Frank, Ph.D.



Artist, scholar, and writer, Ellen Frank has received many awards in painting, book design, and scholarship including a Fulbright Fellowship, National Endowment for the Arts, Ford Foundation Fellowship, Pollock-Krasner Award in Painting, New York State Council on the Arts, and a New York Foundation for the Arts grant.

Dr. Frank studied art history and connoisseurship at Yale University, the Courtauld and Warburg Institutes, and holds an interdisciplinary doctorate in English Literature and the Visual Arts from Stanford University.

Dr. Frank was Assistant Professor of English Literature at UC Berkeley where she co-designed and created the first interdisciplinary major "Literature and the Visual Arts"; she was guest Associate Professor at Barnard College and Rutgers University; Visiting Professor at School of Visual Arts and Tyler School of Art. Her first book, Literary Architecture: Essays Toward a Tradition (University of California Press), was awarded the New York Institute for Graphic Arts 50 Best Books; Ronce & Coffin Club Design Award; and "Best Book in 50 Years" by University of California Press.

In 2005, Dr. Frank founded Ellen Frank Illumination Arts Foundation, Inc., a non-profit global organization dedicated to the transformative power of art to build a culture of understanding and peace. Cities of Peace is its primary initiative. As artistic director, Dr. Frank has trained artist-interns from more than 20 countries, and unites scholars and experts to work on its joint creations.

# Էլլեն Ֆրանկ՝ գիտությունների դոկտոր



Արվեստագետ, նկարիչ, գիտնական և գրող Էլլեն Ֆրանկը պարգևատրվել է նկարչության, գրքի դիզայնի ոլորտներում բազմաթիվ մրցանակներով և կրթաթոշակներով՝ ներառյալ Ֆուլբրայթի, Արվեստի ազգային հիմնադրամի, Ֆորդ հիմնադրամի կրթաթոշակները, գեղանկարչության ոլորտում Պոլոկ-Կրասներ մրցանակը, Նյու Յուրքի պետական արվեստի խորհրդի և Արվեստի Նյու Յորքի ֆոնդի դրամաշնորհները:
Պրոֆեսոր Ֆրանկը արվեստ և արվեստի պատմություն է ուսումնասիրել Յելի համալսարանում, Կորտու և Վարբուրգ ինստիտուտներում, իսկ դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է Սթենֆորդի համալսարանում՝ անգլերեն գրականության և տեսողական արվեստի միջառարկայական ոլորտում:
Պրոֆեսոր Ֆրանկը անգլերեն գրականություն է դասավանդել Յու-Սի Բերքլիի համալսարանում, ուր նա համահեղինակել է Գրականություն և տեսողական արվեստ առաջին միջառարկայական մասնագիտացումը: Նա հրավիրյալ դասախոս է եղել Բերնարի քոլեջում և Ռութջերս համալսարանում, այցելող դասախոս՝ Տեսողական արվեստի համալսարանում և Թայլերի արվեստի դպրոցում: Իր առաջին գիրքը՝ Գրական ճարտարապետություն. Էսսեներ ավանդույթի մասին (Քալիֆորնիայի համալսարանի տպագրություն) արժանացել է Գրաֆիկական արվեստի Նյու Յորք ինստիտուտի 50 գրքերի ցանկում ընդգրկվելու պատվին, Ռոնս և Քոֆին ակումբի մրցանակին և համարվել 50 տարվա մեջ Քալիֆորնիայի համալսարանի կողմից տպագրված լավագույն գիրք:
2005 թվականին պրոֆեսոր Ֆրանկը հիմնադրեց Ellen Frank Illumination Arts Foundation Inc. ոչ կառավարական միջազգային կազմակերպությունը, որի առաքելությունն է արվեստի վերափոխիչ ուժի միջոցով կառուցել խաղաղություն և փոխըմբռնման մշակույթ: Խաղաղության Քաղաքները այդ կազմակերպության գլխավոր նախաձեռնությունն է: Որպես ստեղծագործ տնօրեն՝ պրոֆեսոր Ֆրանկը վերապատրաստել է կամավոր նկարիչների ավելի քան 25 երկրից և նախագծի միացյալ աշխատանքների շուրջ է համախմբել աշխարհի տարբեր երկրներից բազմաթիվ մասնագետների և գիտնականների:

## CITIES OF PEACE YEREVAN 2015

ELLEN FRANK ILLUMINATION ARTS FOUNDATION, Inc.
DALIA LANE FOUNDATION

EXPRESSES SINCERE GRATITUDE TO:

## OUR HONORARY SPONSORS

Arsen Aghajanyan
Levon Arevshatyan
Ashot Baghdasaryan
Armen Darbinyan
Movses Dzavaryan
Artur Janibekyan
Mushegh Mamikonyan
Mikayel Minasyan
Gor Nahapetyan
Ruben Vardanyan

## OUR INTERNATIONAL SPONSORS

Golden Artist Colors, Inc., New York, USA
Giusto Manetti Battiloro, Florence, Italy
LIBECO Linen Weaving Mill, Belgium

## OUR ORGANISERS AND PARTNERS

RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY
ANTIKYAN GALLERY
STATE NATIONAL GALLERY
OPERA SUITE HOTEL

## OUR ARTISTS & INTERNS

Mariam Aleksanyan
Anna Avagyan
Lilit Bachachyan
Inessa Gharibyan
Gayane Ghazaryan
Arevik Grigoryan
Merine Hayrapetyan
Siranush Hovsepyan
Iness Karoyan
Ruben Malayan
Ani Manana Matevossian
Lilit Mirzoyan
Artur Muradyan
Lilit Sargsyan
Anna Sargsyan
Gayane Saroyan
Magi Shahbazyan
Alexandra Shahmuradyan
Ani Tarjumanyan

## OUR EXECUTIVE ASSISTANTS

Nehama Grenimann Bauch (Israel, Germany)
Ajda Mladenovic (Slovenia)
David Yeramyan (Armenia)
Masha Zmitek (Slovenia)

## OUR CONSULTANTS

Aristakes Ghazinyan
Irina Gaiuk
Hasmik Gevorgyan
Ana Khachian

Lilit Meliksetyan
Shushanik Melik-Adamyan
Lilit Vardumyan
Irina Oznetsyan

## OUR SUPPORT TEAM

Ruben Elamiryan
Iren Danielyan
Svetlana Hovhannisyan
Hripsime Margaryan
Ashot Martirosyan
Smbat Tumoyan

## PRESS

Public Television of Armenia
Armnews TV
Armenia TV
Yerkir Media TV
Newspaper “Novoe Vremya”
Magazine “Im Yerevan”
Magazine “Yerevan”
Official website
Armeniangenocide100.org
CivilNet TV
Smartstory.ru

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՐԵՎԱՆ 2015

ELLEN FRANK ILLUMINATION ARTS FOUNDATION, Inc.
DALIA LANE FOUNDATION

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՀԱՅՏՆՈՒՄ.

## ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

Արսեն Աղաջանյանին
Լևոն Արևշատյանին
Աշոտ Բաղդասարյանին
Արմեն Դարբինյանին
Մովսես Ձավարյանին
Արթուր Ջանիբեկյանին
Մուշեղ Մամիկոնյանին
Միքայել Մինասյանին
Գոռ Նահապետյանին
Ռուբեն Վարդանյանին

## ՄԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

Golden Artist Colors, Inc., New York, USA
Giusto Manetti Battiloro, Florence, Italy
LIBECO Linen Weaving Mill, Belgium

## ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Հայ-Ռուսական համալսարանին

Անտիկյան ցուցասրահին
Ազգային պատկերասրահին
«Օպերա Սուիտ»
հյուրանոցին

## ՄԵՐ ՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

Մարիամ Ալեքսանյանին
Աննա Ավագյանին
Լիլիթ Բաչաչյանին
Արևիկ Գրիգորյանին
Անի Թարջումանյանին
Ինես Կարոյանին
Մերինե Հայրապետյանին
Սիրանույշ Հովսեփյանին
Ինեսա Ղարիբյանին
Գայանե Ղազարյանին
Ռուբեն Մալայանին
Անի Մանանա Մաթևոսյանին
Լիլիթ Միրզոյանին
Արթուր Մուրադյանին
Մագի Շահբազյանին
Ալեքսանդրա Շահմուրադյան
Լիլիթ Սարգսյանին
Աննա Սարգսյանին
Գայանե Սարոյանին

## ՄԵՐ ՕԳՆԿԱՆՆԵՐ

Նեհամա Գրենիման
Բաուխին (Իսրաել, Գերմանիա)
Դավիթ Երամյանին (Հայաստան)
Մաշա Ժմիտեկին (Սլովենիա)
Աիդա Մլադենովիչին (Սլովենիա)

## ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ

Իրինա Գայուկին
Հասմիկ Գևորգյանին
Աննա Խաչյանին
Գոհար Հայրապետյանին
Արիստակես Ղազինյանին
Լիլիթ Մելիքսեթյանին
Շուշանիկ Մելիք-Ադամյանին
Լիլիթ Վարդումյանին
Իրինա Օզնեթյանին

## ԱՋԱԿԻՑ ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Իռեն Դանիելյանին
Սմբատ Թումոյանին
Սվետլանա Հովհաննիսյանին
Աշոտ Մարտիրոսյանին
Հռիփսիմե Մարգարյանին

## ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը
Արմենիա հեռուստաընկերությանը
Արմնյուզ հեռուստաընկերությանը
Երկիր Մեդիային
Ցնոքվոյե Վրեմյա» թերթին
«Իմ Երևան» ամսագրին
«Երևան» ամսագրին
Armeniangenocide100.org պաշտոնական վեբ-կայքին
Սիվիլնեթ TV-ին
Smartstory.ru-ին

DALIA LANE FOUNDATION

ANTIKYAN Gallery

ELLEN FRANK
ILLUMINATION ARTS
FOUNDATION, Inc.

www.citiesofpeace.org